



## Ավետիք Իսահակյան

Աննա Մատակյանին, 1905թ. , ապրիլի 14,  
Ալեքսանդրապոլ

Ես միայն երեկ երեկոյան դարձա Երևանից, Էջմիածնից և ստացա քո նամակը, ցավում եմ խորապես, որ վշտացրել եմ քեզ, բայց և ուրախ եմ, որ դրանով շատ բան կպարզվի մեր մեջ. առհասարակ. ես կովով, գոռով եմ քու բերնից խոստովանքներ լսել. ասա՛, սիրելիս, ասա՛, իմ հոգուս հոգի, ասա՛ ինձ, ինչ որ զգում ես, թող լեզուդ-սիրտդ միայն բաց լինի իմ առաջ. ուրիշների մոտ կեղծիր, ստիր, բայց իմ առաջ եղիր ծով՝ բացարձակ. աշխարհում ես եմ «ես հարկավոր, ուրիշ մարդիկ դատարկ բաներ են. ամենից առաջ ես, հետո՝ ուրիշները:

Ես վաղը երեկո կգամ Թիֆլիզ. այնպես որ շաբաթ օրը կլինեն այդտեղ, ո՞ւր քեզ տեսնեն, եկ Дворцовая ул., այդ տեղերը, դումայի մոտերը, Սակաձեի կաֆեի մոտերը, թե չէ կուգամ քեզ մոտ, այդտեղ կպարզվինք, կբացատրվինք, և Քրիստոսի հարության հետ հարություն կառնի և մեր սերը. ես հավատում եմ դրան:

Քո՛ Ավետիք

14 ապրիլի, 1905 Ալեքսանդրապոլ